ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» ապրիլի 2012 թ. N-Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ. 345-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

***Երևան քաղաքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1) Հարավ-Արևմտյան Բ 1 թաղամասի 37 շենքի հ. 62 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վաչագան Լյուդմիկի Ծատուրյանին,

2) Հարավ-Արևմտյան Բ 1 թաղամասի 37 շենքի հ. 65 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գարեգին Պարույրի Մելքոնյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Երևան քաղաքի նախկին Օրջոնիկիձեի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 24.11.1989թ. հ. 23/75 որոշման հիման վրա թույլատրվել է նախկին Օրջոնիկիձեի պողոտայի 13 շենքի հ. 13 բնակարանի վարձակալ Լյուդվիգ Վաչագանի Ծատուրյանի 4 անձից բաղկացած ընտանիքի հետ, տեղում կառուցվող Օրջոնիկիձեի պողոտայի 13/1 շենքի 6-րդ հարկի հ. 19 երեք սենյականոց բնակարանի վերաբերյալ կնքել բնակարանային պայմանագիր:

Ժամանակավոր բնակության համար վերոհիշյալ քաղաքացուն 24.11.1989թ. կնքված պայմանագրի համաձայն հատկացվել է Երևան քաղաքի Հարավ-Արևմտյան Բ 1 թաղամասի հ. 37 շենքի հ. 62 բնակարանը, որտեղ էլ վերջինս մինչ այժմ բնակվում է իր ընտանիքով:

2. Երևան քաղաքի նախկին Օրջոնիկիձեի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 24.11.1989թ. հ. 23/80 որոշման հիման վրա թույլատրվել է նախկին Օրջոնիկիձեի պողոտայի 13 շենքի հ. 17 բնակարանի վարձակալ Պարույր Աշոտի Մելքոնյանի 4 անձից բաղկացած ընտանիքի հետ, տեղում կառուցվող Օրջոնիկիձեի պողոտայի 13/2 շենքի 6-րդ հարկի հ. 19 երեք սենյականոց բնակարանի վերաբերյալ կնքել բնակարանային պայմանագիր:

Ժամանակավոր բնակության համար վերոհիշյալ քաղաքացուն 24.11.1989թ. կնքված պայմանագրի համաձայն հատկացվել է Երևան քաղաքի Հարավ-Արևմտյան Բ 1 թաղամասի հ. 37 շենքի հ. 65 բնակարանը, որտեղ էլ վերջինս մինչ այժմ բնակվում է իր ընտանիքով:

Սակայն, Երևան քաղաքի նախկին Օրջոնիկիձեի (ներկայիս Արշակունյաց) պողոտայի հ. 13 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նախկին Օրջոնիկիձեի 13/1 և 13/2 (ներկայիս Արշակունյաց) հասցեներում նոր կառուցվող շենքերի շինարարությունը դադարեցվել է և դրանք չեն կառուցվել:

Հարավ-Արևմտյան Բ 1 թաղամասի հ. 37 շենքի հ. 62 և հ.65 հասցեների բնակարանները, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող այլ բնակարանները ՀՀ կառավարության 29.05.2009թ. հ. 604-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցվել են Երևան համայնքին:

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետն իր 22.03.2012թ. հ. 01/21/1550-12 գրությամբ խնդրել է քննարկել և ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծել վերը նշված անձանց և նմանատիպ խնդրով այլ քաղաքացիներին հատկացված բանկարանների փոխանցման հարցը:

Ստեղծված իրավիճակում Երևան քաղաքի Հարավ-Արևմտյան Բ 1 թաղամասի հ. 37 շենքի հ. 62 և հ.65 հասցեներում գտնվող բնակարանները սեփականության իրավունքով Վաչագան Լյուդմիկի Ծատուրյանին և Գարեգին Պարույրի Մելքոնյանին անհատույց օտարելու /նվիրելու/ համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի նշված անձանց ընտանիքների բնակարանային խնդիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարաններն անհատույց օտարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ